ԵԿԵՂԵՑԻԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

—Փետրուարի 3-ին Տոկիայում մեռել է ռուս եկեղեցու բազմարդիւն միսիոնար Ճապոնիայում՝ Նիկոդայոս արքեպիսկոպոսը 75 տարեկան հասակում։ Նրան կարելի է համարել Ճապոնիայի առաքեալ։ Նորա 50 ամեայ միսիոնարական գործունէութեան շնորհիւ այնտեղ կազմուել է մի մեծ ուղղափառ քրիստոնէական համայնք, որը իւր մէջ հաշուում է 32,246 հոգի։ Նա հիմնել է այնտեղ դպրոց, հիւրանոց, հիւանդանոց, եկեղեցի, մամուլ և այլն։ Հանգուցեալի թաղումը տեղի է ունենում մեծ հանդիսաւորութեամբ։

—1912 թուի պետական նախահաշուով Ռուսաստանի քաղաքի և գիւղի հոգևորականութեանը յատկացուած է 14,809,000 ր. իսկ եկեղեցական դպրոցներին 16,947,000։

—Վերջերս յունաց թագաւորութեան լուսաւորութեան մինիստրը պարլամենտ է մտցրել դպրոցական մի օրինագիծ, որի մէջ հետաքրքիր է այն, որ յոյն գիւղացիների երկրագործութիւնը բարեւաւելու նպատակով որոշուած է յոյն վանքերին կից օրինակելի փորձադաշտեր կազմակերպել, որով պիտի շրջակայ գիւղացիներին ծանօթացնեն հողագործութեան և անտեսութեան գործնական պարապմունքների հետ։ Այդ հաստատութիւնները պիտի բարձրացնեն անշուշտ և վանքերի տնտեսութիւնը, որի եկամուտները պիտի գործադրուին յոյն եկեղեցու կարիքների վրայ։ Մտադրութիւն կայ հիմնել հոգ. դպրոցներ՝ ծխական դպրոցների համար ուսուցիչներ և ծխական հոգևորականներ պատրաստելու համար. իսկ Աթէնքի համալսարանի աստուածաբանական բաժանմունքից աւարտողներին վերապահել գիմնազիաներում կրօնի դասաւանդութիւնը։

—«Вѣстникъ Грузинс. Экзархати» թերթը հրատարակել է վրաց մէջ մի նորակազմ ընկերութեան կանոնադրութիւն, որը կոչուում է «Վրաստանի թեմի Ս. Աստուածածնի ուղղափառ եղբայրութիւն»։ Այս ընկերութեան նպատակն է ուղղափառ քրիստոնէութեան կրօնաբարոյական լուսաւորութիւնը տարածել Վրաստանում։ Այս նպատակով նա պիտի կազմակերպի եկեղեցական գրքերի տարածումը և ընթերցանութիւնը. գրոյցներ եկեղեցական

հարցերի շուրջը, եկեղեցական երգեցողութեան ու եկեղեցական կոնցերտներ։ Պիտի հրատարակի գրքեր և թերթեր կրօնաբարոյական բովանդակութեամբ ռուս և վրացի լեզուով պիտի հիմնուի եկեղեցական գրքերի և թերթերի ընթերցարաններ և գրադարաններ։ Անդամ կհամարուին ուղղափառ քրիստոնեաներից նրանք, որոնք տարեկան առնուազն 50 կ. կվճարեն։ Տարին մի անգամ անդամների ընդ. ժողով պիտի լինի Վրաստանի էկզարխի նախագահութեամբ կամ թոյլտուութեամբ։

—Հռոմը պատրաստում է տօնել այս տարի Կոստանդինոս Մեծի քրիստոնէութեան ազատութիւն պարգևող Միլանի հրովարտակի 1600 ամեակը։ «l'Univers» հաղորդում է, որ պապը հրաւիրել է ամբողջ աշխարհի կաթոլիկներին այս դէպքը փառաւորագոյնս տօնել իբրև պատմութեան մէջ եկեղեցու տարած բազմաթիւ յաղթանակներից առաջինը։

—Որոշուած է այս տարուայ Դեկտեմբերի 9—13 Վայանում գումարել կրօնների պատմութեան IV կոնգրէսը։ Նախապատրաստական աշխատանքը և զրաղմունքների ծրագիրը մշակում է մի յանձնաժողով, որի նախագահն Շանտէպիզը-Լա-Սօմիկն, իսկ քարտուղարը Բազէլի համալսարանի աստուածաբան պրոֆ. Բերտոլէտ։

Կոնգրէսի զրաղմունքները ունեն 10-ն ճիւղեր. 1) Վայրենիների կրօնը և ընդ. բնոյթ ունեցող հարցեր, 2) Չինաց և ճապոնների, 3) Եգիպտացիների, 4) Սեմիտների, 5) Իսլամական, 6) Հնդիկների և Իրանի, 7) Յոյների և հռոմայեցիների, 8) Գերմանացիների, կելտերի և սլաւների, 9) Մալայեան և պոլինէզեան ցեղերի կրօնները և 10) Քրիստոնէութիւնը։ Համաժողովը պիտի կրի զուտ գիտական բնոյթ. հաւատի հարցերը այնտեղ չեն քննադատուի։ Ամէն բէֆերատի համար տրուում է 20 րոպէ ժամանակ։ Պաշտօնական լեզուն կլինի Ֆրանսերէն, Գերմաներէն, Անգլիերէն և Իտալերէն։